A796r յառնէն ի բաց տանէր, թէպէտեւ ոչ բարիօք, // ալլ ամենայն իրաւք իրաւացի հեռի առնէր: Տեսանեմ եւ անդուստ ինձ զամենայն զառ ի կեանոն զանհարթութիւն եւ զզծուարութիւն ի ներքս անկանէր, եւ առ իմաստասիրութիւն ոչ զիրին ճանապարհ, եւ ոչ ցանկութեան, եւ պատճառին արժանաւոր: Ալլ մերքն յորժամ աստուծոյ սիրելի են, ածեալ ածցին նորա բարեխաւսութեամբ լուսազոյնքն: Բայց զնա բազմապատիկ աստուծոյ մարդասիրութեան եւ առ մեր ազգս մատակարարութիւն բազում միջոցաւ ծանուցեալ եւ միշտ պայծառազոյն ցուցեալ, պայծառալ/զոյն եւս եկեղեցոյն առաջնորդ զնէր, եւ երեւելի, եւ հռչակաւոր աստուածային երիցութեամբք աթոռովք առ ժամանակ մի ընտրեալ, եւ միտով կենարացոց քաղաքան զաշխարհ ամենայն լուսաւորէր: Եւ զինչ օրինակաւ՝ ոչ վաղվաղակի ընդունէր զաստիճանն եւ ոչ միանգամայն լուսացեալ, եւ իմաստնացեալ, որպէս բազումք այժմ, որք վերակացութեան փափաքեն, ալլ կարգաւ եւ արիւնաւք հոգեւորաւք ի վեր ելանելոյ պատուոյն արժանաւոր լինէր:

B72v

Իէ. Չի եւ ոչ զովեմ իսկ ես առ մեզ զանարգութիւն եւ զանզարգութիւն՝ երբէք եւ յորժամ ի դարանակալ եղելոց բեմին, զի զամենեանն ոչ համարձակիմ բամբասել եւ ոչ իրաւացի է՝ զովեմ զնաւական արէնսն, որք զղեկն նախ առաջին տան ի ձեռս այժմու նաւաւորին եւ անդուստ յառաջին խելսն ածեն նաւին, եւ հաւատան զառաջին կողմնն: Այնպէս ի վերայ նաւաւորութեան նըստելով ունի յետ բազում անգամ աշխատութեանց ի ծովուն եւ հողմոյն դիտաւորութեան՝ որպէս եւ ի պատերազմականսն ունի զինուոր, զասապէտ, զօրավար: Այս կարգ բարի եւ ազտակարագոյն հնազանդեցելոցն եւ մեր առաւել, եւ սէր արգեաւք արժանաւոր նոյնպէս ունել, բայց այժմ վտանգի, քան զամենայն սրբագոյն դաս առ մեզ, քան զամենեանն է ծիծաղելի, զի ոչ յառա-

B73r

քինութենէ առաւել է նախաթոռութիւն, քան եթէ ի շարագործութենէն: Եւ ոչ արժանատրացն, այլ զարատրացն են ամոռն: Սամուէլ ի մարգարէսն, որ զառաջիկայսն տեսանէր\*, այլ եւ Սաւուղ ի բացրնկեցիկն, Հոորովամ ի քաղաւորս, Սողոմոնեան այլ եւ յնորորովամ ծառայն եւ աստամբն: Բժիշկ ոչ որ եւ ոչ կենդանագիր, որ ոչ որ զքնութիւնս հիանդութեանցն զիտեաց յառաջագոյն|| կամ բազում գոյնս ի միասին խառնեալ կերպարանեաց, բայց նախ ամոռ գտանի զիրաւ՝ ոչ ինչ աշխատեալ, առժամայն յարժանատրութենէ միանգամայն սերմանեալ եւ համանգամայն ի վեր բուսեալ: Որպէս առասպելն առնէ զհսկայան, ստեղծանէ զառաւրեայ սուրբսն եւ իմաստունս լինել հրամայէ, ոչ իմաստնացելոցն եւ ոչ աստիճանան յառաջ եկելոց, նախ քան զկամելն եւ մին ժուժկալ եւ ի նուաստ տեղոջն խոնարհեալ կա բարձրութեան արժանատր, յորովս աստուածային բանիցն հրահանգեալ, բազումս զմարմինն արինագրեալ հնազանդութիւն հոգոյն: Իսկ միտն ամբարտաւան առաջի նստի եւ գլխանն ամբարտնայ հակառակ լաւացն եւ ոչ զողայ յարինացն, ոչ սարսափէ ի զիմացն զըժուժկալն ի ստորեւ տեսանելով, այլ միանգամայն իշխանութեամբըն եւ իմաստնագոյն զինքն կարծէ շարաշար զիտելով եւ զիմանալն յիշխանութենէն ի բաց բառնայ:

ԻԸ. Բայց ոչ սքանչելին եւ Մեծն Բասիլիոս այսպէս, այլ զոր արինակ յայլսն յամենեսեան, նոյնպէս եւ յայսոսիկ, զարդ ու բազմաց արինակ հաստատեալ կայր: Քանզի նախ առաջին զաստուածային զիրսն ընթեռնոյր ժողովրդեանն, որ այնոցիկ էր մեկնիչ եւ զայն ոչ անարժան վարկանէր զկարգ աստիճանին, այնպէս յաթոռն երիցութեան, նոյնպէս յեպիսկոպոսացն արհնէր զտէրն\*\*, ոչ զողանայր զիշխանութիւն եւ ոչ յաբշտակէր, եւ ոչ զհետ ընթանայր զպատուոյն, այլ պատին զկնի գայր, ոչ մարդկային շնորհն էր, այլ յաստուծոյ եւ զաստուածայինն ընդունէր: Արդ, որ նախաթոռութեան էր բանն կացցէ մնասցէ, բայց որ վերջին ամոռոյն սակաւ ինչ յերկարեսցուր, || որպիսի ինչ եւ նա յինէն սակաւ մի զանց առնէր՝ ի մեջ բանիցս կալով:

B73v

ԻԹ. Լինէր իմն առ այրն զժտութիւն առաջի իշխանի եկեղեցոյն, բայց ուստի՞ եւ կամ զիա՞րդ՝ լուել է լաւագոյն: Այլ համայն լինէր առնն յայլումն ամենայնի, ոչ ըստ միում ումեք ինչ սխալ

\* Հմմտ. Նսալի. եւկ. 26:

\*\* Հմմտ. Սաղմ. 82, 32:

և սրանչելոյ ի բարեպաշտութեան, որպէս ցուցին յայնժամ հա-  
լածանքն և առ նա գծաութիւն: Սակայն ախտանայր իմն առ նա  
մարդկարէն, վասն զի բոլորն հարկանէ ոչ զլուրովիցն միայն, այլ  
և զքաջացն արատ, որպէսզի յատուկ լինել աստուծոյ ամենեւին  
առանց վրիպանաց, և անըմբռնելի ախտիցն, և շարժէր ի վերայ  
նորա, որ մի անգամ եկեղեցոյն ընդ իրաւք, և իմաստանագոյն:  
Եթէ իմաստանագոյնք, քան զբազումս իցեն, որք յաշխարհէ զին-  
քեանս որոշեն և աստուծոյ զկեանսն նուիրեն, և ասեմ ըստ մեզ  
զնապարացիս, և որք յայնպիսիսն առաւելք են փութացեալք, ոչ  
զժնդակս առնելով զիրեանց զիշխանութիւն անտես առնել: շուրջ  
թշնամանեալ և ի բաց մերժեալ չիրս համարձակէին՝ ի յոյժ վը-  
տանգատրս: Պատառումն զմտաւ ածէին և բաժանումն մեծի, և  
անխոտովական եկեղեցոյ մարմնոյ ոչ սակաւ ինչ և, զժողովրդեանն  
զմասն ի բաց հատանելով, որք միանգամ յամակացն, և որք ի  
պատուականացն: Եւ զհարին այն լինէր յերկից ի զարատրագու-  
նացն, քանզի և այրն պատկատելի, որպէս ոչ զիտեմ, ևթէ այլ որ  
առ մեզ իմաստասիրեաց, և բաւական զհամարձակութիւն տալ:  
Եթէ ախորժէր հաւաքելոցն յինքն և զտրամեցուցանողն ընդ  
պատմունանաւ ունէր, քաղաքն ի վերայ կացելոց խոտովութեան,  
որպէս ոչ արինատր և ոչ կարգաւորապէս առաւել քան, ևթէ  
բռնութեամբ զվերջ/ակացութիւն էր ընկալեալ: Եւ մերձ էին յարեւ-  
մըտից քահանայապետիցն ոմանք անդրէն ձգել լինքեանս յե-  
կեղեցոյն, որ քան ուղղափառութիւն էր:

B74r

Լ. Եւ ապա զինչ առարինին այն, և խաղաղականի աշակերտ,  
զի և ոչ ընդդէմ յերկարել ինչ ունէր առ թշնամանողսն, և առ  
փութացեալսն, և ոչ առ ինքն կռուել, և կամ ճնշքն զմարմին  
եկեղեցոյն, և զայլ ազգ պատերազմեցելոյ, և շարաշար անկեալ:  
Կալով յայնժամ ի հերձուածողական զարութենէն և միանգա-  
մայն խորհրդակցաւք մեւք, առ այնոսիկ վարէրն և հարազատ  
A796v խորատատուաւք փախստ/ական անդուստ հանդերձ մեւք ի Պոն-  
տոս փոփոխէր և անդ խորհրդանոցացն վերակացու լինէր: Ինքն  
կայր արժանաւոր յիշատակի զանապատն ողջունելով ընդ Եղիսյի  
և ընդ Յովաննու սրանչելոյն, զայն աւզտակարագոյն առաւել ընդ  
ինքեան վարկանէր, քան ևթէ ինչ զմտաւ ածել յազազս մերձա-  
կայիցն անարժան իւրում իմաստասիրութեան և ապակասնել այն-  
կոծութեամբք զխաղաղութեամբ խորհրդոցն առաջնորդութիւն. թէ-  
պէտեւ այնպէս իմաստասիրի, և աստուածայնոյ լինէին հեռա-

նախոյն իրք, այլ լուսազոյն եւ սքանչելի եւս դասանեմք զանդրէնն զայն: Եւ ունէր այսպէս: —

Ա. Մինչդեռ յայնուսիկ էաք մեր յանկարծակի ի վերայ կայր ամբ կարկաթի լցեալ եւ սատակող որոտմամբ զամենայն խորտակել զկնկղեցի, յորմէ բաժանեցաւ եւ որ ընկալաւ թագաւորն սակնէր եւ քրիստոսատեսաց երկուք մեծամեծաւրն ախտացեալ անհաւատութեամբ եւ հայհոյութեամբ: Զկնի հալածչին հալածիչն եւ յետ ապստամբին ոչ ապստամբ, այլ եւ ոչ ինչ լուսազոյն քրիստոնէից եւ մանաւանդ քրիստոնէից երկնզածագոյն մասինն եւ սրբութեամբ երկրպագու ի սուրբ երրորդութեանն, զոր միայն բարեպաշտութիւն եւ կոչեմ եւ փառս փրկութեան: Քանզի ոչ դաստուածութիւն կշռեմք եւ ոչ զմին, եւ զանմերձեանալի բնութիւն ատարացուցանեմք յինքննէ ի ցեղս ատարաւորս, եւ ոչ շարաւ զշարն բժշկեմք ըստ անաստուած Սարելի հաւաքմանն, ամբարշտագոյն բաժանմամբ, եւ անտեղի լուծանեմք, զոր Արիոս իմացաւ, մոլութեան անուանակից եւ զբազումս յեկեղեցոյն կործանեաց, եւ ազականեաց. ոչ զհայր պատուելով անարգեմք, որք ի նմանէ, անհաւասար աշտիճանաւք աստուածութեան: Այլ զմի զփառս հայր ծանուցեալ, զհամապատուութիւն զմիածնին, մի եւ զորդոյ, եւ զհոգոյն, եւ եթէ զոր յերիցն ի ստորայինսն դնեմք, զամենայն քակեալ իմանամք, երիւք առանձնաորութեամբք եւ միով աստուածութեամբ պաշտեմք եւ ճանաչեմք, յորոց ոչ ինչ զմտաւ ամէր նա, եւ ոչ ի վեր հայել կարէր: Այլ ի վայր ուղղացն զինքն նուաստանայր, ընդ ինքեան խոնարհեցուցանել յանդգնեցաւ եւ զբնութիւն աստուածութեան, եւ արարած շար լինելով ի ծառայութիւն ի վայր իջուցանէր զտէրութիւն, ընդ արարածս զնէր զանեղ բնութիւն, եւ զգեր ի վերոյ՝ քան զժամանակն:

Բ. Արդ՝ նա այսպէս իմանայր եւ հանդերձ այսպիսի ամբարշտութեամբ ի վերայ մեր զինուորէր, զի եւ ոչ այլ ինչ, քան եթէ բարբարոսական յարձակումն զայն վարկանելի է, որ կործանէր ոչ զպարխապս եւ զքաղաքս, եւ զտունս, եւ ոչ այլ ինչ ի փոքունց, եւ ի ձեռագործաց, եւ դարձեալ ուղղեցնւոց, այլ զնոյն ինքեանս զոգիսն ի վայր քարշէ: Մարտակիցք էին նմա եւ զունդք արժանաւորք, շարք՝ կնկղեցեաց իշխանք, զառիւնք՝ շորորդապետք ընդ նովաւ աշխարհի, որք զկէսսն անդէն իսկ վաղվաղակի ունէին յեկեղեցեացն եւ ընդ ոմանս կուռէին, եւ զայսն յուսային թագաւորական հակամիտութեամբն, եւ ձեռամբ ոմանց]] ի վերայ ամէին,

B75r

և կիսոց սպառնային: Եկին և զմերս կործանել, ոչ յոք այնքան վստահանալ ունեւոյ՞ յամենեցունց, որքան ի յառաջ ասացելոցն ի կարճատուփին և յանհմտութիւն, որ յայնժամ մեր առաջի անցեալ նստէրն, և ի մեր ինքեանց ի հիւանդութիւն: Արդ՝ հանդէսն էր մեծ և յաւժարութիւն բազմաց ոչ վատթարազգի և մարտն տկար, և ոչ ունէր զնախամարտիկն և զարուեստաւոր կռուակից զարութեամբ բանի, և հոգոյ: Եւ ապա զի՞նչ այնուհետեւ քաջ, և մեծախորհուրդ անձն այն, և ստուգապէս քրիստոսասէրն, ոչ յուղոյից կարատացաւ բանից առ ի մերձ, և կռուակից լինել, այլ միանգամայն ետեւ զմեզ բարեխաւսել, վասն զի հասարակաց էր հանդէսն երկոցունց, որպէս բանի առաջի արկելոց, և բարեխաւսութեան յաղթեցաւ, և որոշէր քաշապէս լինքինէ, և իմաստասիրէր հոգոյն խորհրդոյք: Այլ լինել կարճատուփեան ժամանակ, եթէ զայն երբէք պարտ իցէ կրել հանգստեան և այլ երկայնամտութեան կարեացն վաղվաղակի ի Պոնտայ: Հանդերձ մեւ քիտփոխէր և նախանձէր ի վտանգեալ ճշմարտութեան, լինէր մարտակից կամաւք, և մաւրն բերեալ՝ զինքն կկողեցոյն տայր:

ԼԳ. Իսկ արդ յաւժարեաց արդեաւք այսպէս և նահատակեցաւ քան զյաւժարութիւն նուազագոյն կամ հանգիստանալը արիարար ոչ իմաստութեամբ արդեաւք կամ հանճարով առանց վտանգից ինչ, և կամ զամենայն զայնոսիկ կատարելապէս, և առուել քան զբան: Մնա՞յր ինչ արդեաւք կարճատուփեան ի նմա նըշխար և ոչ երբէք, այլ միանգամայն զամենայն փոփոխէր, խորհէր, զործէր, և արգելոյր ի միջոցի զգայթակղութիւն, և զզլորումն, և որովք նորա համարձակեալք՝ հակառակ մեզ բանակէին՝ //զոմն ըմբռնէր, զոմն խափանէր, և զոմն անդրէն դարձուցանէր: Լինէր ոմանց պարիսպ ամուր և պատնեշ, ոմանց մուրճ՝ սմաշելով զվէմանն՝ կամ շուր ի փուշս<sup>\*\*</sup>, որպէս ասեն Աստուածային գիրք, դիրաւ ծախելով զխոռուկան թշնամանոց սատուածութեան և եթէ ինչ Բառնարաս, որ զայնոսիկ ասէր, և զրէր ընդ Պաղոսի՝ նահատակելով Պաղոսի շնորհն, որ և ընտրեալն լինէր, և զործակից առնէր նահատակութեան:

ԼԴ. Եւ նորա այնպէս անցեալ զնային անգործք, և շարքն՝ շարաշար, յայնժամ առաջին յաղթահարեալք, և ամաշեցեալք ուսանէին ոչ դիրաւ զկապաղոկացիսն արհամարհել, թէպէտեւ ա-

B75v

\* Երեմ., ԻԳ, 29:

\*\* Մազմ. ճԺէ, 12:

մենայն մարդկան ոչ ինչ այնպէս սեփականէ իբրև զհաւատոյն անպատկասելի լինել, եւ առ զաւտոն հաւատարմութիւն, եւ հարազատութիւն յորմէ եւ միաւորելն եւ զաւրանայն ազնեն ազնականացն, մանաւանդ եթէ յոյժ լաւագոյն, եւ հզաւրագոյն: Եւ նմա զի՞նչ երկրորդ գործ եւ փոյթ լինէր, բժշկել զգահերէցսն, լուծանել զկարծիսն, զհաւանեցուցանել զամենայն մարդիկ, որքան ինչ միանգամ տրտմեցան, փորձութիւն իմն լեալ շարին եւ կոտորի ընդ բարոյ միաբանութեան յաղաչելով: Բայց ինքն զիտէր քարէն քաջ հաւանութեան եւ հոգեւոր կարգի, եւ նորին ալազաւ մերձէր, իմաստնացուցանէր, հնազանդէր, խրատէր: Ամենայն ինչ էր ինքեամբ՝ խորհրդակից բարի, առաջամարտիկ յաջողակ, աստուածայնոցն մեկնիչ, գործոց առաջնորդ, ծերութեան ցուպ, հաւատոյն հաստատութիւն, ի ներքուստ հաւատարմագոյն եւ առ արտաքինսն

A797: գործականագոյն եւ միով || բանի՝ այնքան ի բարեպաշտ մտութիւն, որքան ի թշնամութիւն յառաջագոյն կարծիցեալ լինէր: Անդուստ || նմա եւ իշխանութիւն եկեղեցոյն, թէպէտև աթոռովն ունէր զերկրորդն, վասն զի բարեմտութիւն ի ներքս բերելով՝ զիշխանութիւն փոխարեն առնոյր՝ եւ է սքանչելի իմն ձայնակցութիւն, եւ յարմարումն զարութեան: Մին ժողովրդեանն հովուէր եւ միան՝ հովուին, եւ իբրև ափսոսազարդ իմն արուեստի ընդելուցանէր զզաւրաւորագոյնն, վասն զի պարտ եւ արժան իսկ էր նոր յաթոռն նստեցելումն տակաւին եւս յաշխարհական նիւթոյն շնչել ինչ շեւ եւս հաստատեցելոյն ի հոգեւորսն եւ յուղագունի ալեկոծութեան շուրջ եռացելոյ: Եւ ի վերայ կացելոյ եկեղեցոյ թշնամեացն պաշտպան լինէր, եւ աւժանդակէր, եւ յազագս այնորիկ զմարտակցութիւն սիրէր, եւ զիշխելն նորա ինքեան իշխել վարկանէր:

A797:

B76r

ԼԵ. Բայց յազագս եկեղեցոյ առնն խնամակալութեան եւ վերակացութեան, յուղք եւ այլք ծանաթութիւնք եղեն ի համարձակութիւն առ իշխանս, եւ առ այլսն, եւ առ հզաւրագոյնս քաղաքին առանել եւս զիրին, լուծումն ոչ անհաւատալի, այլ ի նորին իսկ ի ձայնէ տպաւորեալ արիւնաւք բարուցն վարեցեալ, վերակացութիւն կարատացելոցն: Բազումք հոգեւորականք ոչ սակաւք եւ մարմնականք, վասն զի եւ այն բազում անգամ յոգին բերէ բարեմտութեան ծառայել, աղքատարութիւնք, ատարբընկալութիւնք, կուսատածութիւնք, սուրէնսդրութիւնք, մենացելոց գրաւորականք եւ անգիրք. ազաւթիցն հրամանք, բարեզարդութիւն բեմին: Այլք, որովք արգենաւք մարդ աստուծոյ եւ ընդ աստուծոյ

կարգեալ աւգտեսցի. այլ զմինն զմեծն եւ զծանաթագոյնն ասացից: Սուվ էր եւ որպէս ոչ երբէք ուրեք յիշեցելոցն դժնդակագոյն տազնապլէր քաղաքն եւ ազնականութիւն էր եւ ոչ ուսեօք, եւ ոչ ղեզ շարշարանացն, քանզի ծովեզերայր զայնպիսի զկարատութիւնս ոչ զժուարաւ բերեն, տալով զիւրեանցն եւ ի ծովէն ընդունին: Բայց մեզ մէջ երկրեայցս եւ առաւելեալն անաւզուտ, եւ կարատութիւն անհնարատր, ոչ ունելով զիարզ շահեսցուք ինչ գոյիւքն, եւ կամ զոչ գոյսն բերցուր: Եւ զժուարին է յայնպիսի իրս ունդացն անվշտակցութիւն, եւ անյագութիւն, քանզի սպասեն ժամանակաց, եւ վաճառաշահք լինին ի կարատութիւնսն, մշակեն զթշուառութիւնսն, ոչ տեսոն փոխ տան, որ ողորմի աղքատաց՝ լսելով, եւ ոչ եթէ, որ ժխնայէ ցորեան հրապարականէժ լիցիս<sup>66</sup> եւ ոչ այլ ոչ ինչ, որք մարդասիրութեամբն պատուիրեցան, եւ կամ մարդկան սպառնացան: Այլ են քան զարժանն անյագագոյնք եւ խորհին շարաշար նոցա յինքեան, եւ յինքեանց զաստուծոյ զգութն խոտորեցուցանեն, որում եւ մանաւանդ պէտս ունելով անգիտանան, քան եթէ նոցա այլք: Զայսոսիկ ցորենավաճառքն եւ ցորենաշահքն, որք ոչ յազգականութենէն պատկառեն, եւ ոչ առ աստուածութիւն գոհացողք՝ յորմէ ունելն է նոցա յայլոց ի վտանգս:

Ը. Իսկ նա անձրեւելն ոչ ունէր հաց յերկնէ աղաթիւք, եւ կերակրել յանապատի զժողովուրդ փախստական, ոչ աղբիւրացուցանել յատակէ զկերակուրն անծախելի թափմամբ լցեալ, որ էր հրաշափառագոյն, զի կերակրեսցէ զկերակրողն ատարասիրութեան փոխարինաւ եւ ոչ հինգ հացիւք յազեցուցանել զհազարս, որոց եւ ն/շխարքն յուովից սեղանոց, այլ զատարութիւն: Քանզի այնոցիկ Մովսէսի եւ Եղիայի, եւ իմոյ աստուծոյն, յորմէ եւ նոցա այնոցիկ կարելի եղեն թերեւ արդեաւք ժամանակացն այնոցիկ, եւ յայնժամ վարուցն, վասն զի նշանք անհաւատից, այլ ոչ հաւատացելոց, բայց որ այնոցիկ էր յարմարագոյնն, եւ ի նոյն բերէր, զայն եւ իմացաւ, եւ գործեաց հանդերձ նովին հաւատով: Բանիւ զունողացն շտեմարանս բանայր եւ խրատու գրոց բրդէր քաղցելոց զկերակուրն, եւ յազեցուցանէր զաղքատսն հացիւ<sup>67</sup>, եւ

<sup>66</sup> ՀՃՃտ. Առակք. ԺԹ, 7:

<sup>67</sup> Առակք. ԺԱ, 26:

<sup>68</sup> ՀՃՃտ. Սաղմ. ԺԼԱ, 15:



«սնուցանէր զնոսս ի սովին»<sup>\*</sup>, «զանձինս քաղցեալս»<sup>\*\*</sup> լցուցանելով բարեւար, և զի՞նչ արինակաւ, զի և ոչ այս փոքր է ի յաւելուածն ժողովէր ի միասին զսովեալս զվիրաւորեալս: Էր երբէր և որք զուղեարեայ ինչ շնչէին, զարս, զկանայս, զմանկունս, զժերս, զամենայն հասակս ողորմելիս, զամենայն տեսակ կերակրոյ հանգանակելով, որ միանգամ հանդիպի սովոյն յազնականութիւն, մասամբք լցեալ առաջի զնէր կատսայս և ապիտացելովքն առ մեզ կերակրովք զազքատան կերակրէր, և ապա Քրիստոսի սպասաւորութեան նմանէր, որ և, զկտասն սփածանելով, ոչ անարժան վարկանէր լուանալ զոտս աշակերտացն և իւրովք ծառայիքն, և կամ ծառայակցար վարէր, սպաս տանէր մարմնոց կարաւտացիւոցն, բժշկէր և զոգիս՝ յարմարելով զպէտան ընդ պարսին:

Է77v Լէ. Եւ զիրագոյնս առնէր յերկոցունց կողմանց այսպիսի նոր ցարենատուն մեզ և երկրորդ Յովսէփ: Սակայն զի և առանել ևս ասել ինչ ունիմ, զի մին շահէր սովոյն և զԵզրիպտոս զնէր մարդասիրութեամբն զառատութեան ժամանակի ի սովն մթերելով<sup>\*\*\*</sup> և այլոց երազովք յայնոսիկ աւգաւէր: Իսկ սա ձրի քաղցր էր և ցորենատուութեամբն ուղեական՝ առանց շահավաճառութեան առ մին ևեթ հայէր, մարդասիրութեամբ զմարդասիրութիւն ստանալ, և անդի հանդիպեալ բարեացն, աստի՛ ցորենաշափութեամբն: Զայնոսիկ յեա բանին կերակրոյն և կատարելագոյն բարեզորութեան, և բաշխելոյ ճշմարտապէս զերկնայինն և զբարձրագոյնն, եթէ արդեաւ նոյն ինքն իցէ հրեշտակացն բան, որովք հոգիք կերակրին և արբուցանին աստուծոյ քաղցեալք՝ հայցելով զկերակուրն ոչ զհոսանուտն և ոչ զի բաց զնացեալն, այլ զմիշտ մնացականն, որոյ ցարենատու էր նա և մանաւանդ փարթամ, ազքատագոյնն և տարակուսեալն՝ զո՛չ զսով հացի, և ո՛չ զծարսըրոյ<sup>\*\*\*\*</sup> բժշկելով, այլ զբանի ցանկութիւն ճշմարտապէս կենդանականի և կերակրողի, և յաճումն ածողի հոգեւոր հասակին զգեղեցկապէս կերակրեալն:

ԼԸ. Յայսցանէ և յայսպիսեացս, քանզի զինչ պարտ է յուրովս ասելով զեզերել, այլ ինչ զանուն բարեպաշտութեան յինքեան բն-

\* Սաղմ., ԼԲ, 19:

\*\* Սաղմ., ԸԶ, 9:

\*\*\* Հճճա. Դոկ., ԺԲ, 42:

\*\*\*\* Ամովս, Ը, 11:

A797v

B78r

բողի փոփոխեցելոյ և ի նորա ձևոսն ախորժելով վաղճանացելոյ ի բարձրագոյն եպիսկոպոսութեան աթոռն ելանէր՝ ոչ առանց աշխատութեան և ոչ առանց յաշաղանաց, և կառույ, որք ի գաւառէն դարանակյ||ալք էին, և ի շարագունից քաղաքին այնորիկ կարգեցելոց համայն պարտ լինէր յաղթել հոգոյն սրբոյ: Այլ և յաղթէր իսկ բազում կամակարութեամբ, քանզի շարժէր յարտաքին սահմանացն ամոռս արս բարեպաշտութեամբ ծանալթագոյնս և նախանձաւորս, || և ընդ նոսա զնոր Աբրահամ, և զհայրսպետն մեր զիմ ասեմ հայրն ախորժելով և հանդիպին սքանչելիք ոչ միայն յուղովութեամբ ամաց լքեալ, այլ և հիւանդութեամբ մաշեալ: Եւ ի վերջին շունչն էր, համարձակէր ի ճանապարհն՝ ազնել ընտրութեան և վստահանայր ի հոգին, և հիմ ի համառատութեանէն փախչիմ, մեռեալ ի ներքս եղեալ իբրև ի գերեզմանի ի գահաւորակին մանուկ անդրէն դառնայր, զպարտոր ի վեր հայելով, հզարանայր ի ձեռանէն և յաւժմանէն և ոչ բազում ինչ ասել՝ թեև ի դիտոյն ամեցելոյ այս ամբարեցի ի հին պատմութիւնսն, էթէ ցաւ զառողջութիւն շնորհէ և յաւժարամտութիւն զմեռնալս յարուցանէ, և վաղէ ծերութիւն ամեալ հոգով:

B78v

ԸՔ. Այնպէս նախաթոռութեան արժանի լինէր, իբրև յայնպիսեաց եղելոց նոյնպիսի շնորհի հանդիպէր, յայսպէս ամեցելոյքն՝ որպէս պատշաճ է ոչ ամաշեցոյց և ոչ իւրք ի կարգին զիւր զիմաստութիւն, և կամ զվստահացելոցն գոյոյ: Այլ այնքան առաւելոյր, քան զինքն միշտ, որչափ յառաջագոյն, քան զայլսն, ցուցանէր գեղեցկագոյնս և իմաստասիրագոյնս, յաղազս այնոցիկ զիմաստսն, քանզի առաջնորդէր ուսմկին. ուսմն առաքինի լինել և ուսմնն ոչ շար: Եթէ ինչ և որքան բարի իշխանի, վերակացուի և ուսմնն ոչ շար: Եթէ ինչ և որքան բարի իշխանութիւն ոչ յուղագոյն, քան զբազումս առաջի ունել և ոչ միշտ լաւագոյն երեւել, և ոչ շափել յարժանաւորութեամբն, և աթոռովն զառաքինութիւն, վասն զի հազիվ արդեաւք ծայրին միջոցն հանդիպեսցի: Եւ խնամով առաքինութեան ձգել զյոլովս ի շափաւորութիւն, մանաւանդ ||զի իմաստասիրեցից ինչ յաղազս այնոցիկ լաւագոյն, որպէս առ Փրկչին ևս տեսանեմ: Թուի թեև իմաստնոցն իւրաքանչիւր ոք յորժամ ընդ մեզ եղև կերպարանեալ, գեր ի վերոյ, քան զմեզ և զմերս, զնոյն և անդ հանդիպեալ զմտաւ ամեմ, վասն զի նա յառաջադիմանայր, ասէ, որպէս հասական, նոյնպէս և իմաս-

տութեամբն եւ շնորհիւ՝, ոչ առնելով նորա զաճումնն, վասն զի զի՞նչ արդեաւք քան, որ ի սկզբանն կատարեալ, կատարելագոյն լինէր: Այլ առ սակաւ զայնոսիկ մերկացուցանէր եւ երևեցուցանէր, զասնն զառաքինութիւն ոչ յաւելուած, այլ զորք թուի ինձ մեծագոյն յայնժամ առնուլ առաւելագունիւ նիւթով իշխանութեան վարեցեալ:

Եւ. Նախ առաջին զայն ամենեցուն առնէր երևելի ոչ իբրև մարդկային շնորհ նմա զործն, այլ աստուծոյ պարգև տունալ: Յայտնէ եւ մերն որպիսի ինչ իմաստասիրելոյ ընդ իս ի ժամանակին յայնմիկ իմաստասիրէր, վասն զի այլոցն ամենեցուն կարծիս ունել եւ ընթանալ ինձ եղելովքն, եւ խնդակից լինել, որպէս սիրելոյ զէպ էր եւ բաժանել զիշխանութիւն՝ մանաւանդ քան եթէ բռնադատել, եւ սիրելութեամբ զայն նշանակել: Ի ծանրագունէն փաղչելով՝ եւ յամենայնէ, որպէս թէ այլ ոք, եւ անաշխատ ժամանակի ի նախանձուէն, եւ այլ սղզ ըստ նմին երկնչէի, զորս եւ տակաւին եւս խոռովութեանցն ի տան կայի, մնայի՝ բռնադատութեամբ սանձելով զցանկութիւն: Թէպէտեւ մեղադրէր նա, սակայն ներէր եւ զկնի այնորիկ ի վերայ կացեալ իմ ամբողջս այսորիկ զպատիւն ոչ ընդունէի՝ յազագս նորին պատճառի, ոչ զերիցանց զառաջին պատիւս // եւ ոչ մեղադրէր, այլ եւ զովէր եւս բարիք առնելով զամբարտաւանութիւն՝ բամբասել առաւել ի սակաւուց ձգելով, որք զայնպիսին անզիտանան զմատակարարութիւնս: Եւ եթէ ինչ զործել քանիս եւ իւրով խորհրդով ընդդէմ, եւ սակայն որպէս արդեաւք առաւելեցուցց այր, որքան զամենայն զողորբանս, եւ զփաղաքշանս վերագոյն զանձն ունէր եւ առ մին եւեթ հալէր բարոյն արէնս, յազագս մեր այնպէս ինչ զմտաւ ածել, զորս առաջինս յիւրոց սիրելեացն եւ ընդ ելիցն ծաննաւ:

Եւ. Զկնի այնորիկ զխոռովութիւն կազկացուցանէր եւ բժշկէր քանիք բժշկական մեծախորհրդութեամբ: Ոչ ողորբանաւք եւ ոչ անազատարար զայն առնէր, այլ եւ յոյժ հզարապէս եւ վայելչաբար, որպէս ոչ զմերձակայն եւեթ գիտիցէ ոք, այլ եւ զհանգերձեայն բարի հաւանութեամբ մատակարարիցէ, քանզի տեսանէր զկազկութիւն, լուծումն եւ յքումն առնել: Իսկ զխստութիւն, խոշորութիւն եւ ասպարասանութիւն երկոցունց աւզներ իրերաւք, ընդ հեղութիւն զընդիմաճարութիւն, եւ ընդ խստութեան զկազկութիւն խառնէր: Սակաւ ինչ քանի կարաւտանայր, բայց զործով յուովագոյնն

\* Հմմտ. Ղուկ., Բ, 51:

զարացուցանէր՝ զբժշկութիւն ոչ արուեստի ծառայելով, այլ բարեմտութեամբ յինքն զրաւէր, ոչ հարստահարութեամբ վարեցեալ, այլ կարացեալ, ոչ բարկանալ մերձեցուցանէր եւ մեծագոյն էր ամենեցուն պարտութիւն ընդունել ի նորա մտացն եւ անհասանելի զիտել զառաքինութիւն: Եւ մի՛ ինքեանց փրկութիւն վարկանել ընդ նմա լինեն, եւ ընդ նովա կարգելն մի՛. եւ վտանգ զընդդ ՚իմանայն նմա՝ եւ աւտարութիւն յաստուծոյ կարծել ի նմանէ զհեռանալն: Այնպէս կամաւք տեղի էտուն եւ յաղթեցան, եւ, որպէս ճայթման որոտալոյ, ի ներքոյ խոնարհեցան, այլ ոմն ինչ ի պատասխանիսն ժամանեալ, եւ զչափ թշնամութեան ի բարեմտութեան շափ փոփոխէին, եւ յառաքինութեան աճումն, զոր եւ առ այն պատասխանի զարարորագոյն գտանէին: Բայց եթէ ոք յաղագս շարութեան անբժշկելի անխնամեցաւ եւ ի բաց անկաւ, զի ինքն ընդ ինքեան խորտակեացի, եւ վատնեացի՝ որպէս ժանգ ընդ երկաթոյ ծախել:

B79v

Եւ Բ. Իսկ յորժամ տանն իրք նմա ըստ մտի ունէին եւ, որպէս ոչ ոք արդեաւք կարծէր յանհաւատիցն եւ յանգիտակացն, զնա խորհէր իմն ի մտի մեծ եւ բարձրագոյն, քանզի այլոցն ամենեցուն առ ոտսն միայն տեսողաց եւ ըստ ինքեանս, որպէս զգուշագոյնս ունիցին, խորհողաց եթէ արդեաւք այն զգուշագոյնս յաղագս ընկերին, ոչ ինչ յառաջանան եւ ոչ մեծ ինչ, եւ զարարոր իմանալ, ՚ի եւ կամ գործել կարենս Թէպէտեւ յայլումն շափաւոր,

A798r

բայց յայնոսիկ ոչ շափաւորէր, այլ բարձրացուցանէր զգլուխն ամբառնալով եւ շուրջ զոգոյն աշս ածելով զամենայն աշխարհ ի ներքս առեալ, յորքան զփրկութեան բան ընթացաւ: Տեսանելով զմեծն աստուծոյ զժառանգութիւն, որ բանիւք նորա եւ արինաւք խնամակալեցաւ զսուրբ ազգն, յղթագաւորութիւն եւ զբահանայութիւն\* շարաշար կացեալ ի բիւք կարծիս եւ ի մուրութիւն աւժտեալ եւ զյնօրիպտոսէ փոփոխեալ, եւ զտնկեալ այգին\*\* յանաստուած, եւ ի խաւարային ան՚՚զիտութեանն ի գեղեցկութիւն, եւ յանբաւ մեծութիւն յառաջ եկեալ մինչեւ ծածկել զամենայն զերկիր եւ զլերինս\*\*\*: Եւ քան զմայրս գեր ի վերոյ բարձրանալ զնա շարաշար եւ վայրենապէս ի խողէ բանսարկուէն ապականեալ, ոչ բաւական կարծէր ողբալ ոգով զախտն եւ առ աստուած միայն ամբառնալ զձեռս, եւ ի նմանէ շուրջ եղելոց շարեացն լուծումն

B80r

\* Պետր. 1, Բ, 9:  
\*\* Հմմտ. Սաղմ., 2Թ, 9:  
\*\*\* Հմմտ. Սաղմ., 2Թ, 11:

հայցել, և ինքն ննչել, այլ և արգենի ինչ և յինքննէ ի ներքս բերել՝ որպէս պարտ էր:

ԵՔ. Քանզի զի՞նչ արգեաւք տխրելի, քան զթշուառութիւն զայն էր, յաղագս որոյ մանաւանդ պէտք էին փութալ, որ ի վերն հայի, զի միոյ առն բարիոք գործողի և կամ շարաշար ոչ ինչ ի հասարակսն յայնմանէ նշանակի, բայց հասարակաց այնպէս և կամ այլազոյ ունազոց, և իւրաքանչիւր ումեք նմանապէս ունել ամենայն հարկաւորութեամբ լինի զայնոսիկ զմտաւ ածելով, և զիտելով նա հասարակաց խնամակալուն, և վերակացուն: Եւ վասն զի «ցնց ոսկերաց սիրտ հողացող»\*, որպէս Սողոմոնի և ճշմարտութեան թուի և անցաւակիցն լինել խնդամտութենէ իսկ վշտակից տրտմութենէ և կարգ սրտի մնացեալ խորհուրդք: Յաղագս այնորիկ տաղնապեալ լինէր, զժուարէր, խոցոտէր, կրէր զՅովն անուն, զԴաւթայ կիրս, վտանգէր հողովն\*\*, ոչ տայր քուն աշաց և ոչ նիրհումն կոպոց\*\*\*, ծախէր զմնացեալ մարմինսն ընդ հողան՝ մինչև գտանիցէ շարին լուծումն: Խնդրէր զաստուածային արգենականութիւն և զմարդիկային, որ զաղարկեցուցէ զհասարակաց զհրդեհն և որ պաշարեալն ունէր զմեզ խաւարն:

B80v

ԵԴ. Մի՞ զայն իմանայր, և յոյժ փրկանեաւ ամփոփել զինքըն՝ որպէս կարողութիւն էր և փակեալ հողովն զամենայն զրմարդկային խորհուրդք: Շարժէր զամենայն գրոց խորս, ընտրէր, գրէր զբարեպաշտութիւն և ընդդիմադրութեամբ, մարտիւք և կռուաւք զսաստկացեալ հերձուածողացն անդրէն ընկրկէր զլանդըզնութիւն: Զոմանս և ի ձեռս եկեալս մերձաւոր զինուք՝ լեզուան կործանէր և զկէսս ի բացուստ ի վայր ընկննոյր նետաձգութեամբ որս և արկողովն: Էր ոչ ինչ անպատուազոյն, քան ի քարեղէն տախտակսն քանդակեալս, և ոչ միում հրեական ազգին սակաւուց նոցա արինադրելով՝ յաղագս կերակրոց, և ըմբելեաց, և առ ժամանակեայ զոհից, և մարմնոյ մաքրութեանց, այլ ամենայն ազգի և մասին աշխարհիս, յաղագս բանի ճշմարտութեան յորմէ և կեալն լինի: Եւ երկրորդ՝ վասն զի նմանապէս անկատար, անբանազործ և բան անզործ յաւելոյր ի բանն և զգործոյն

\* Առակք, ԺԳ, 30:

\*\* Հմմտ. Յովն., Գ, 8:

\*\*\* Հմմտ. Սաղմ., ԺԼԱ, 4:

զագնականութիւն առ ոմանս երթալով, եւ առ կէսս առաքելով,  
եւ զայսն կոչելով:

ԵՍ. Եւ զի՞նչ զայսն պէտք են ասել: Այլ զայր դարձեալ առ  
մեզ քրիստոսամարտ թագաւորն եւ հաւատոյն բռնաւորն՝ հանդերձ  
բազում ամբարշտութեամբ եւ շերմագոյն պատերազմաւ առ հա-  
կառակամարտն զաւրաւոր, քան զնա բանիւ ըստ անմաքուր այն-  
միկ այսոյն շարի, որ ի մարդոյն լուծեալ մուտրեալ շրջելով եւ առ  
B81r նոյն// ինքն սպա դառնայր՝ հանդերձ բազում այսովք ի ներքս  
բնակեալ, որպէս յաւետարանսն լուար՞, այնմիկ նմանող լինէր  
նա: Միանգամայն զառաջին զպարտութիւն վերստին կոչեցնելու,  
յաւելոյր իմն յառաջին պատերազմունսն, քանզի դժնդակ իմն եւ  
եղկեկի վարկանէր բազմաց ազանց իշխան լինել, յուովից փառաց  
արժանաւոր զամենեւեան, որ շուրջն էին, կործանել զաւրութեամբ  
ամբարշտութեամբ եւ ընդ ձեռամբ ունել զամենեւեան զհանդի-  
պեալսն, քան զմի զայր, եւ զքաղաք մի տկարագոյն երեւել, եւ  
ծաղր լինելու Ոչ միայն որք տանէին զնա վերակացուք անաստուա-  
ծութեան, այլ եւ ամենայն մարդկան՝ որպէս կարծէին:

ԵԶ. Զպարսից թագաւորէն ասեմ: Յորժամ երբեմն հակառակ  
Ելլադացոցն զինուորեցաւ զամենայն ազգ մարդկան ի վերայ նո-  
ցա զումարէր եւ եռայր ամենայն սրտամտութեամբ, եւ խորհրդով:  
Ոչ միայն զնա ի բաց բառեալ անշափ երեւէր սպառնալեալսն,  
այլ իբրեւ առաւել զնոսա հիացուցանել եւ ահաւոր զինքն առնել,  
տարերացն նորաձեւութեամբ, երկիր ոմն ատար լուեալ լինէր եւ  
ծով նորոյ արարչին եւ զաւր ընդ ցամաք նաւեալ, եւ հետեակեալ  
ի խորս կղզիք յաբշտակեալք, եւ ծով մտրակեալ: Եւ որքան ինչ  
հիացուցանող յայտնապէս էր զինուորութեան եւ զաւրավարութեան  
արհաւիրք վատթարազգեսց, եւ ծաղրաւորագունացն, եւ կարծրա-  
զունից մտաւք: Բայց նա այնպիսեացս ոչ ումեք կարատանայր ի  
B81v հակառակ մեզ զինուորելն, այլ որ՝ ինչքան զայսոսիկ // շարագոյն  
եւ վնասակար զայն առնէր, եւ ասացեալն լսելի լինէր: «Եղ յերկին  
զբերան իւր՞՞ հայհոյութիւն խաւսելով ի բարձունս, եւ լեզու նո-  
բա անցանէր ընդ երկիր՞՞: Գեղեցկապէս զնա աստուածայինն Գա-  
ւիթ նախքան զմեզ արձանացոյց, որ զերկին յերկիր խոնարհեցոյց  
եւ ընդ արարածս համարեցաւ զբնութիւն գերաշխարհիկ, զոր եւ

\* Հմմտ. Ղուկ., ԺԱ, 24—26:

\*\* Հմմտ. Սաղմ. 2Բ 9:

\*\*\* Հմմտ. Սաղմ., 2Բ, 9:

ոչ տանել արարածս կարէր, թէպէտեւ ընդ մեզ լինէր քանի մար-  
դասիրութեան, զի զմեզ ձգեսցէ առ ինքն գլխակիր անկեալս:

Խէ. Եւ պայծառ նմա առաջին յանդգնութիւն, պայծառագոյնք  
ևս վերջինք հակառակ մեզ հանդէսքն: Եւ զո՞րս ասեմք. զառա-  
ջինսն՝ զարտարո՞յ քան զսահմանսն հալածեալն փախուստն յա-  
փրջտակութիւն ընչիցն, երեւելիքն և աներեւոյթն հաւանեցուցա-  
նելն, որք ժամանակ էր բռնադատելն ոչ հաւանեցելոցն ոճանց,  
արտաքս մղեցելոց յեկեղեցեացն, որք միանգամ ուղիղ քանին և  
լստ մեզ էին, և կէսք ի ներքս մտեալք, որք թաղաւորական կո-  
րըստեանն հանդիպէին, որք զձեռագիր ամբարշտութեան պահան-  
ջէին, որք զրէին քան զայնս ևս շարագոյնս երիցանցն այրումն ի  
ժողն ընկենու: Զաւրավարք ամբարխշտք՝ ոչ առ Պարսիկսն զաւ-  
րացեալք և ոչ Սկիւթացիս ընդ ձեռամբ արկեալս, և ոչ զայլ ոք  
բարբարոսական ազգ ի բաց մաքրեալ, այլ ի վերայ եկեղեցեաց  
զումարեալք, և առ սեղանսն կարսւեալք և զանարին զոհսն  
մարդկան, և զոհից արեամբ պղծելով, և զկուսից պատկառանս  
Թշնամանելով: Զի զինչ լինիցի, զի արտաքս մեր/ժեսցի Յակոբ  
հայրապետն և հակառակ ի ներքս մտցես աւատեցեալն և նախ  
A798v քան զձեռունդն: Այսոքիկ առ/աջնոց նորա յանդգնութեանցն պատ-  
մութիւնք, որք մինչև ցայժմ շարժեն յոլովից արտասար ի լիշա-  
տակ զոլով և լսելի լինելով:

ԽԸ. Եւ յորժամ ընդ ամենայն անցանէր և յանշարժս, և  
յանդրժելի յայս եկեղեցեաց մայր այնպէս ծառայելով յարձակէր  
և զմնացեալ տակաւին ևս կենդանական փայլակնն ճշմարտու-  
թենէ յայնժամ առաջի դնէր շարաշար խորհելով՝ իբրև նէտ ի  
կարծրագունի ինչ բախեալ անդրէն դարձաւ: Եւ բարիոք իմն զար-  
կեալ տեղի տայր, այնպիսում վերակացուի եկեղեցոյս հանդիպե-  
ցաւ և յայնպիսի պարսպէ կործանեալ քակտեցաւ: Արդ՝ զայլսն  
յասողացն և պատմողացն յայնժամ իրացն եղելոց է լսել և  
պատմէ ոչ որ, եթէ ոչ որ յամենեցունց այնքան սքանչանան, որ-  
քան յայն ժամու զսքանչելիսն ճանաչին՝ զմարտսն, զխոստմուն-  
սըն, զսպառնալիսն, որք յատենական կարգէն առաքեցան նմա և  
հաւանեցուցանել ձեռնարկանէր, որք ի զինուորական են, որք՝ ի  
կանանց ի տանցն, որք ի կանանց արք և յարանց՝ կանայք, որք  
միայն արուորագոյնք յամբարշտութեան, որք բնութեամբ պակ-  
շտուելն ոչ ունէին, որով կարէին միայն լեզուաւ պոռնկել: Գահ-  
ճապեալին նարուզարդանայ յարուստէն զսուրն սպառնացեալ և

խրով հրովն առաքեալ, և զոր առաւել, քան զայն սքանչելագոյնն է, և ոչ կամելով որ զանց առնել կարասցէ, զայն տաց բանիս համառատագոյն, որքան է կարողութիւն:

BS2v Եթ. Ո՞ ոչ զիտէ զյայն ժամու իշխանն քաղում իւրով յանդրդ- նութեամբն || հակառակ մեզ առաւել ևս վարեցեալ ևս վասն զի առ նոսա մկրտութեամբն էր կատարեալ կամ վախճանեալ առաւել ևս քան զհարկաւորութիւն, սպաս տանէր հրամանատուին և ի ձեռն ինքեան զամենայն շնորհէր զարութիւն նորա պահել և հաստատուն ունել յերկարամամանակեայ: Այնպէս մոնշէր հակառակ եկեղեցոյ, զառիւծու զտեսակ զղեցեալ առիւծաբար և գոշէր, և ոչ եկա մուտ յուղից քաջն այն ի ներքս ածեալ լինէր, մանաւանդ եթէ մտանէր ի ներքս իրրել ի տան և ոչ յատեն կոշեցեալ: Որպէ՞ս արդեաւք արժանաւորաբար պատմեցից զիշխանին զյանդրդնութիւն կամ զառնն առ նա հանդերձ հանճարով զլիճումնն: Զի՞նչ, ասէ, ով դու կամ է՞ր զանունն ասել, ոչ ևս եպիսկոպոս արժանաւոր կոչել, առ հակառակ այնպիսում իշխանութեան համարձակեալ և միայն յայլոցն ամբարտաւանեալ: Այնորիկ աղագաւ, ասէ, քաջդ և զի՞նչ է ապարասանութիւնդ, քանզի ոչ ևս ունիմ ճանաչել, եթէ ոչ զթագաւորացն, ասէր, ունիցիս զաւանդն, յայլոցն ամենեցուն ի ներքոյ փակեցելոցն և յազթահարեցելոց, վասն զի ոչ զայդոսիկ ասաց թագաւորն իմ: Ախորժէ և ոչ արարածոյ երկիր պագանել ներեմ, աստուծոյ արարած հանդիպեալ և աստուած զով հրամայել: Եւ մեք զինչ քեզ թուիմք կամ թէ ոչ ասէ զայդոսիկ գործել, զինչ ոչ մեծ քեզ ընդ մեզ կարգ մտանել և հաղորդս ունել մեզ: Իշխանք, ասէ, դուք և յերեւելեացս ոչ ուրախանամ, բայց ոչ ևս քան զաստուած պատուականագոյնք և հաղորդս ունել մեծ է, քանզի որպէ՞ս արդեաւք ոչ ստեղծուած աստուծոյ և դուք, այլ իրրել եթէ զոմանս զայլս ընդ ձեք կարգեցելոցն, վասն զի ոչ երեսաց զքրիստոնէութիւն, այլ հաւատով է նկարագրել:

B83r Մ. Յայնժամ շարժեցեալ իշխանն եռայր առաւել սրտամտութեամբ և յաթոռոյն ի վեր յառնէր, խոշորագունիւք առ նա վարէր բանիւք՝ ընդէ՞ր ոչ երկնշիս յիշխանութենէն, ասէր, մի՞ զուցէ լինիցի ինչ և մի՞ կրեացես իրրել զմի որ ի քաղմաց, մի՞ յիմմէ իշխանութենէս ևս, ո՞չք այնորիկ ծանալագոյնք մեզ լինիցին, վտարումն ընշիցն յարբունիս, արտաքոյ քան զսահմանն ելանել տանջանք, մահ: Եթէ այլ ինչ, ասէ, սպանաս, վասն զի յայդ-



ցանկ և ոչ մի ինչ ի մեզ մերձենայ և նորա ասացեալ զիս՞րոք որո՞վ արինակաւ, վասն զի ընչից վաարման, ասէ, ոչ է բմբրոննի, որ ոչն ինչ ունի: Բայց եթէ այսոցիկ պէտս ինչ ունիցիս այժէից իմոց զգնատուցս և զրոց սակաուց, յորս ամենայն իմ կենանքս, արտաքս սահմանելն ոչ նանաշեմ, որ ոչ ընդ միով անդեաւ եմ քաւանդակեալ և ոչ զայս ունիմ ինչ, յորում այժմս քնակեմ: Այլ զամենայն իմ ասել ուր և անկայց, մանաւանդ եթէ աստուծոյ է, ամենաոր «պանդուխտս եմ ես» և եկ տանջանքն զի՞նչ արգեաւք առցեն ոչ եղելոյ մարմնոյ, բայց եթէ զառաջինն ասիցես գան, այնմ միայն դու ես տէր, իսկ մահն բարեզործ է, քանզի արագագոյն առաքէ զիս առ աստուած, որով կեամն և վարիմ, և առաւելագոյն մասամբ մեռայ և առ որ նկայիմն:

BS3v

ՄԱ. Սաստկագոյն այսորիք հիացեալ իշխանն, ոչ որ, ասէր, և ցայժմ այդպէս ընդ իս խաւսեցաւ՝ և հանդերձ այդպիսի համարձակութեամբ զնորա յաւելոյր գանուեն, վասն զի և ոչ եպիսկոպոսի ասէր ինրեաւ զիպեցաւ, ապա եթէ ոչ ամենայն իբաւք զայս արինակ խաւսէր, յազազս այսպիսեանցս հանդիսանալով յայլսն ամենեանն: Հեղք մեր, ով իշխանդ, և քան զամենեանն զայլսն նուաստագոյնք զայս մեզ պատուիրանն հրամայէ և ոչ միայն այսպիսի զարութենէ, այլ և ոչ զուղեմբեայցն ումեր միում ընդդէմ զլսան ամբառնամբ: Բայց ուր աստուած վտանգեալ առաջիկայ զայլն ամենայն արհամարհեմք և առ նա միայն հայիմք հուր, և սուր, և դազանք, և որք զմարմինսն կոտորեն երկաթի եղնդունքն: Փափկութիւն առաւել մեզ է, քան եթէ արհաւիրք: Աս այդոսիկ թշնամանեա՛, սւշտոնա՛, արա զամենայն, որ ինչ կամք են քեզ, յիշխանութեանդ վայելեա՛: Լուիցէ զայսոսիկ և թագաւորն՝ որպէս մեզ ոչ ես հաճոյ և ոչ հաւանեցուցանես կամակից իննել թագաւորին, թէպէտեւ սպառնաս դժնդակագոյնս:

A799r

ՄԲ. Եւ յորժամ զայսոսիկ ասել և լսել իշխանին և զվիճումներն ուսեալ զառնն, այնպէս առանց զարհուրանաց և անպարտելի լինէր արտաքս առաքել և յուղյարկել ոչ եւս այնուհետեւ հանդերձ նովին սպառնալեաւք, այլ պատկառանաւք իմն տեղի տայր: Բայց ինքն առ թագաւորն մերձեցեալ, որպէս ունէին վաղվազակի, յաղթահարեալ եմք, ասէր, ո՞վ թագաւոր, յայսք անուան վերակացուէ կեկղեցոյ: Գեր ի վերոյ քան զսպառնալիս է այրն, բանիցն հաստատութեամբ՝ քան զհաւանութիւն զարագոյն, զայլ որ

\* Սաղմ., ԼԸ, 13:

փորձել ի վատթարագունիցն: Բայց զնա բռնադատել յայտնապէս  
 եւ ոչ վատահոլմեամբ տեղի տալ սպառնալեացն, որովք զինքն  
 ստղտանէր թագաւորն եւ զովութեամբք առն յաղթահարեալլ  
 սքանչանայր ընդ առնն ընդ արիութիւն:

ՄԳ. Թէպէտեւ պատերազմող էր ոչ բռնադատել հրամայէր եւ  
 զնոյն իրս զերկաթոյ կրել, որ կակզանայ հրով եւ կամ նա նմա-  
 նապէս երկաթ եւ դարձուցեալ ի զարմացումն զսպառնալիսն,  
 զհազորգութիւն ոչ ընդունել ի փոխատրութեանէն ամաշեցեալ հայ-  
 ցէր պատասխանիս: էր ար իմն յայտնութեանց տեսուն ժողով եւ  
 ժողովրդեանն մասն լեալ այնպէս սրբէր զմիատրութիւն. արժան  
 է եւ ոչ զայնու զանց առնել: Եւ յորժամ ի ներքս լինէր եւ զլսելիս  
 առաջի արկանէր սաղմոսերգութեան, հիանայր զժողովրդեանն,  
 զանբաւութիւն տեսանէր եւ զամենայն բարեզարգութիւն՝ որքան  
 ինչ ի բեմին եւ որքան մերձ հրեշտակական առանել քան, եթէ  
 մարդկային: Զնա առաջի ժողովրդեանն կարգեալ ուղղորդ՝ որպի-  
 սի իմն զՍամուէլ բանն նկարագրէ\*, անխոնարհելի մարմնով եւ  
 դիմաւք եւ մտաւք, որպէս ոչ միոյ ուրուք վայրապար եղելոյ, ալ  
 արձանացեալ. զի այսպէս ասացից աստուծոյ եւ բեմին: Իսկ որք  
 շուրջ զնուաւ էին երկնզի իմն կացեալք եւ պատկառանաւք՝ յոր-  
 ժամ զայնոսիկ տեսանէր եւ ոչ առ մի ինչ արինակ կարէր հայն  
 յերեւնալսն, ախտանայր իմն մարդկարէն՝ խաւարաւ եւ ցնորիւք  
 լցեալ լինէին աչքն եւ ոգին ի սքանչեցմանէն, եւ այն էր յուովից  
 անյայտ տակալին: Եւ յորժամ նուիրեացն յաստուածային սեղանն  
 մերձենալ պարտ լինէր, որոց ինքնագործ էր, ընկերակից եւ ոչ մի  
 որ լինէր, որպէս սովորութիւն էր, անյայտ լեալ եթէ յառաջ մատ-  
 լիցի: Յայն//ժամ ախտն ծանալթագոյն լինէր, քանզի գալթակղէր  
 եւ եթէ ոչ ոմն ի բեմէն ունէր զձեռնն եւ զգալթակղումնն հաստա-  
 տէր՝ զլորել արգեաւք անկաժ արժանաւոր արտասուաց լինէր:

ՄԴ. Գաւիթ ընդ նմա խաւէր, ընդ թագաւորին եւ հանդերձ  
 որքան եւ իմաստասիրութեամբ եւ յորժամ դարձեալ արինակ իմն  
 ժողովէր ի մեզ ի ներքոյ, քան զվարագոյրն զինքն առնէր: Ի զէմ-  
 սըն գայր եւ բանից փափաքէր, առանելապէս զի՞նչ պէտք են ա-  
 սել, զինչ ալլ, բայց աստուծոյ ձայնս՝ որ առ թագաւորն եւ առ  
 մեզ: Որքան ընդ նմա մտեալք էաք, լսելիք լինէին այն թագաւո-  
 րին, առ մեզ մարդասիրութեան սկիզբն լինէր եւ հանդարտութեան

\* Հմմտ. Թագ. 1, է. 10:

առաջին, այն յանդգնութիւն յայնժամ վտանգողին դաւաճանութեամբ առանկազոյն իբրեւ հոսուան ինչ դնացեալ:

ՄԾ. Եւ միտն եւս քան զասացեալս ոչ ինչ նուազ, յաղիէին շարքն եւ հաստատեալ լինէր արտաքս քան զսահմանսն էլանել: Եւ ոչ ինչ էր անկազմ, որք յայնոսիկ բերէինն. զիշեր՝ մերձ, ամբողջն՝ պատրաստ, ատելիքն՝ ի կայմման՝ ի տրամութեան բարեպաշտութիւն, յաւժարութեամբ ի նախապարհն մեր եւ այլ, որ ինչ բարի անպատուութեան էր: Եւ ապա ո՞ այնուհետեւ լուծանէր զայն աստուած, քանզի որ հնարն զնգիտառսի զանդրանիկսն՝ զխստացելոյն հակառակ Իսրայէլի, նոյն եւ զմանուկ թաղատրին հարկանէր՝ հիւանդութեան հարուածով եւ արագագոյն այնքան, որքան անդ ի արտաքս սահմանելոյն, աստ ի վտանգ հիւանդութեան, ձեռն խափանեալ լինէր շար գրողին եւ սուրբ զերծանէր, եւ լինէր տապոյն պարզեւ բարեկամ/վարիշտ այլն, զթաղատրին յանդգնութիւն սղշխառհացուցանելով: Զի՞նչ, քան զայսոսիկ, դատողագոյն եւ կամ խոշորագոյն, եւ որք այսոցիկ ի կարգին էին, վտանգեալ լինէր մանուկ թաղատրին, եւ շարաշար ունէր զմարմինն, վշտակից էր հայրն եւ զինչ այլ քան՝ եթէ հայր: Ամենայն ուստեք հայցէր աւգնականութիւն ախտին եւ զբժշկացն զքաջսն ընդդէր, եւ խնդրուածովք առաջի անկանէր, որպէս ոչ այլ երբէք չերկիր անկեալ, վասն զի առնէ եւ զթաղատրս նուաստ ախտ, եւ սքանչելի ինչ ոչ, քանզի եւ Գալիթ յառաջագոյն ի վերայ մանկանն՝ ախտացեալ գրի: Եւ յորժամ ոչ ինչ գտանէր ոչ ուստեք շարին զեղ ի հաւատ առնն ապաւինէր, եւ ինքեամբ ոչ կոչէր ի ներքս ի թշնամանաց տարակուսեալ ամաչէր, այլոց բարեխաւսութիւն հրամայէր, ընտաննդունիցն իւրոց եւ յոյժ սիրելեաց: Եւ նա մերձ լինէր ոչ ինչ խուսափելով, ոչ ժամանակին ընդդէմ յառնէր, որպէս այլ որք, եւ միանգամայն ի մերձենալն դիւրագոյն հիւանդութիւն լինէր, եւ բարեաց հայրն յուսոց, եւ եթէ ոչ էր զազատազտուկն ընդ ըմբելոյն խառնել միտնդամայն զնա կոչելով, եւ այլափառացն հաւատայր: Առողջութեան հանդիպեալ մանուկն ի ձեռս հարսն ապրէր. այս հաւատարիմ լինէր. յայնցանէ, որ յայնժամն մերձն էին եւ հասարորոգք ախտին:

ՄԶ. Նոյն եւ իշխանին փոքր ինչ յետոյ ասեն հանդիպեալ, խոնարհեցուցանէր, եւ զնա ընդ սրբոյն ձեռաք ի վերայ անկեալ իմն հիւանդութիւն եւ ստուղապէս հարուած բարիորք խորհողացն

\* Հմմտ. Քաղ., II, ԺԲ, 16:

խրատն լինելը շատագոյն, քան զքարտիժին, բազում անգամ շարա-  
շար կիրք վտանգէր, արատաուէր, զժուարէր, // առաքէր, մաղթէր,  
զպատասխանին ունիս, գոչէր՝ տուր զփրկութիւն: Եւ համ||այն  
հանդիպէր այնմիկ, որպէս ինքն խոստովանեաց եւ բազումս հա-  
ւանեցոյց յոչ զխտակացն, վասն զի ոչ զաղարէր ընդ նորա իբնս,  
եւ սրանշանալ, եւ պատմել: Եւ արդ առ նոսա արգեաւք նորա  
այնպիսիք, եւ այն դայր կատարած, իսկ առ այլս այլ ազգ ինչ  
կամ զուզնարեայ պատերազմէր, եւ կամ շափաւորապէս իմաս-  
տասիրէր, կամ լոտիճեան արժանաւոր, եւ կամ ոչ զովելապէս, եւ  
ոչ երբէր, այլ, որ շարժեաց երբեմն Իսրայելի, զանդ էր զվատ  
շուէրն: Նոյն շարժէր եւ նմա զՊոնտացոց մասինն իշխանն, պատ-  
ճառանաւք իբրեւ յազագս կնոջ ուրումն զայրացեալ, բայց ճշմար-  
տութեամբ ամբարշտութեան կոռակից էր եւ հակառակ բարե-  
պաշտութեան կայր: Ի՞նչո՞ւմ զայլս՝ որքան եւ որպիսի ինչ ընդդէմ  
առնն թշնամանէր, զի հաւասար է ասել զաստուծոյ, առ որ եւ  
յազագս որոյ պատերազմն: Բայց որ մանաւանդ զթշնամանողն  
ամաշեցոյց՝ եւ զնահատակն բարձրացոյց, որպիսի ինչ մեծ եւ  
բարձրագոյն է իմաստասիրութիւն եւ զարանալն, քան զբազումս  
այն երեւեսցի:

Մէ. Զկին ուն յերեւելեաց յառնէ եւ ոչ նախ քան զյուով ժա-  
մանակ կենաւք որոշեալ, զատաւորին աթոռակից բռնադատէր՝ առ  
ի յամուանութիւն ձգելով, որ ոչ արժանաւորն վարկանէր եւ ոչ ու-  
նելով կինն՝ թէ ո՞րպէս փախիցէ ի բռնութենէն: Խորհուրդ խոր-  
հէր ոչ յանդգնութեան մանաւանդ, այլ հանճարել յաստուածային  
սեղանն փախէր եւ զաստուած առնէր վերակացու՝ հակառակ դա-  
ւաճանութեան, եւ ապա զի՞նչ պարտ էր առնելով նորին ինքեան  
երրորդութեան: Զի ասաց||ից ինչ եւ ատենականապէս ի մեջ գո-  
վութեանցն, ոչ զի զՄեծն Բասիլիոսս եւ որ այնպիսեացն ամենե-  
ցուն արիւնադիրն եւ եթէ այլ որ յոյժ զկնի նորա: Սակայն քահա-  
նայ ոչ խնամ տանել արգելուլ եւ պատկառել, ձեռն կարկառել աս-  
տուծոյ մարդասիրութեամբն եւ արիւնաւք պատուել զսեղանն, զոր  
զամենայն առնել եւ կրել ախորժէր յառաջագոյն, քան եթէ խոր-  
հել ինչ ընդդէմ կնոջն անմարդագոյն եւ թշնամանել զաստուածա-  
յին սեղանն, թշնամանել եւ զհաւատն, որով ազաչէրն, ոչ ասէր  
զատաւորն, այլ պարգութիւն ընդունել ամենեցուն յիմմէ պատ-  
շաճէ զարութենէն եւ մատնիշս լինել քրիստոնէիցն իրեանց ա-  
րիւնացն: Եւ նա հայցէր զազաչող կինն, իսկ սա ունէր զարու-

Սեանք, նա մուլէր եւ կատարած առարկէր զմանս, յորոց ընդ իշխանութեանսն էին ի սրբոյն՝ ի սենեակն խուզել ոչ ըստ պիտոյիցն առանել, բան եթէ ըստ անարգութեան: Զի՞նչ ասես զտունն նորա ախտի, յորում շրջէին հրեշտակք, յոր եւ հայել զանգաղէին կանայք, եւ ոչ զալն միայն, այլ եւ ինքեան զալ, եւ պատասխանի տալ հրամայէր ոչ հանգարտութեամբ եւ մարդասիրտաբար, այլ իրքեւ զմի սք ի զատապարտեցելոցն: Եւ նա մերձ էր, իսկ դատաւորն նստէր լցեալ բարկութեամբ եւ կայր որպէս իմ Յիսուս ի Պիղատոսի զատելն: Շանթիքն հանգրծեալ էին, աստուծոյ սուրն սրեալ եւ տակաւին եւս յապաղէր, աղեղն լարեալ լինէր՝, այլ խափանուան ընդունէր, զապաշաւանաց ժամանակն բառնալով, որ ինչ էին աստուծոյ արէնքս:

ՍԸ. Հաւաքեալ լինէր մարտ միւս եւս նահատակին եւ հալածչին նափորտամբն, որ շուրջ զպարանոցսն ունէր, քարշել հրամայէր: Իսկ նա առ այսուիկ մերկանամ քեզ ասէր, եթէ այսորժես, եւ զպարնգաւտսս հարկանել սպառլինայր զանմարմինն: Եւ նա խոնարհէր, բանց եւ երկաթի եղնգամբք, իսկ նա բժշկես, ասէ, զլեարգս անասնն՝ որպէս զիս մաշէ յայսպիսեանցս՝ բուժես ի վտանգից. եւ նորա յայսոսիկ էին: Իսկ քաղաքն յորժամ զդայր զչարն եւ զհասարակաց ամենեցուն տաղնապն, վասն զի վիրտս իւրաքանչիւր սք ինքեան զթշնամանսն վարկանէր, մուլէին ամենեքեան եւ բորբոքէին, եւ, որպէս ի ծիօյ պարս շարժէր, այլ ի վերայ այլոյ յառնէր եւ կանգնէր ազդ ամենայն եւ հասակ ամենայն՝ որք զինազործքն եւ թագաւորական ոստայնանկ արքն առանել եւս, վասն զի եւ են իսկ նորա յայնոսիկ ջերմազոյնք, եւ զհամարձակութիւն յիշխանութենէ անգի ունին: Ամենայն էր զէն իւրաքանչիւր ումէր մերձ յարուեստէն եւ թէ ինչ յայլ ժամանակին, որմք առ ժամայն առ ի պէտս ձեռացն, քարինք առաջի անկեալք, վաղերք պատրաստք, ընթացք ամենեցուն մի զոչուան, մի հասարակաց, սրտմտութիւն դժնդակ զինեալ զարեւվար եւ ոչ կանայք անզէնք, յայնժամ սրեալք ի ժամանակէն, տէգք էին նոցա կկոցքըն: Եւ ոչ կանայք պարկեշտացեալք նախանձու եւս զորացեալք եւ յարանց յանդգնութիւն փոփոխեալք՝ զուղնաքեայ բան բաժանել զբարեպաշտութիւն վարկանէին՝ եթէ նա որոշեսցի եւ ինքն նոցա բարեպաշտագոյն էր, որ առաջին էարկ ձեռն ի յանդգնեալն յայնպիսիսն: Եւ ապա զինչ ամբարտաւանն այն, եւ յանգուզն զա-

\* Հմմտ. Սազմ. է, 13:

տաւորն աղաշող էր, ողորմելի թշուառական, քան զո՞ ոչ նուաստագոյն մինչև երեւէր առանց արեան վկայն և առանց վիրաց պահեալն, բռնութեամբ զժողովուրդն արգելոյր, պատկառանաւք զբռնեալ զմաղթողն իւր և զթշնամանողն զերծուցանէր: Զայսուսիկ զարբոցն աստուած, որ անէր զամենայն և փոփոխել կազմէ՞

B87r

ի լաւագոյնն, որ Վամբարտաւանիցն հակառակ կայ՞<sup>ա</sup> և խոնարհացն շնորհն ի վերայ շափէ: Եւ զի՞նչ ոչ էր հանգերձեալ, որ բաժանեաց զծովն և զգետն ի վեր դարձոյց, և զտարերս բռնադատեաց, ձեռաց տարածմամբ յաղթութիւն կացոյց, զի ապրեցուացէ ժողովուրդ փախստական, և զնա զերծուցանելն ի վտանկիցն:

ՄԹ. Արդ աշխարհական պատերազմն անդանաւր վաղջանեցաւ և կատարումնն ունէր յաստուծոյ շաջողել, և նորա հաւատոյն արժանաւոր, սկսանէր պատերազմ անդէն վաղվաղակի եպիսկոպոսացն, և նոցին մարտակցացն, որոյ յոլովադոյն էր անփառութիւն, առանել ևս՝ վնաս իշխեցելոցն: Քանզի ո՞ զայս հաւանեցուացէ, շափաւոր լինել այնպէս վերակացուացն կացելոց, ունէին և ոչ առանելութեամբն հեղարար առ նա երից եղելոց պատճառաց: Զի ոչ հաւատոյն բանիւ հանդիպէին, եթէ ոչ ամենայն հարկաւորութեամբ ընդ յոլովսն բռնադատեցին և ոչ ի ձեռնադրութիւն կտրճմտութեամբ կատարելապէս քակտէին, և բազում նուազութեամբ փառացն ըմբռնէին: Քան զամենայն՝ ծանրագոյն էր նոցա միշտ և խոստովանելն ամաթ ի վերայ լինէր, և այլ իմն թշնամութիւն, որ զայնոսիկ նորաձեւան առնէր, դաւառին յերկուս բաժանեցելոյ իշխանութիւն, և ի մայրաքաղաքսն, և բազումք յառաջնմէն ի նորն յաւելութիւն անդուատ, և նոցա իրքն ամբոխէին, քանզի ոմն արժանի|| վարկանէր ընդ բազմութեան բաժանել և զիրեանցն: Եւ այնորիկ ազագաւ փոփոխէր, և այն ինչ եկելոցն նոյնպէս թշնամի եղելոց, և ի նմանէ բաժանեցելոց,

A800r

B87v

<sup>a</sup> Հմմտ. Ամովս., Ծ, 8:

<sup>\*\*</sup> Առակք, 9, 34:

զէսլ լինէր եկեղեցեացն շար պատառմունք եւ բաժանմունք: Չասն զի եւ ի նորածե իրան դուարճանան իմն մարդիկ եւ զիրեանցսն ախորժելով ոչ շահին դիրքս իմն քակտել զկացեալսն, քան եթէ զքակտեալսն անդէն վերստին ածել, որ եւ առաւել եւս զնոսա մուրեցուցանէր, Տարացոցն հարկը եւ ճանապարհք նմա երեւեալք, եւ նոցա լեալք, եւ զսուրբն զՈրհնախա շահ առնել ինքեանց մեծ առաջի զնէր, մինչև զջորեացն բուն հարկանել կրէր: Զառնըն զիր ճանապարհ զնացելոյ արդելուին յառաջնոցն մեծ առաջակացն զնդան եւ պատճառք էին իբրև զքաշավայնուչք իմն, քանզի հոգեւոր մանկունք եւ հոգիք, եւ որ հաւատոյն էր քան, եւ այնպիսիքն ազահոյժեան իրաց էին ծածկոյթք շահավաճառացն, եւ ոչ պարտ, եւ արժան հարկատու լինել շարափառացն, վասն զի ամենայն, որ արտմեցուցանէ, շարափառ է:

Կ. Բայց սակայն ոչ սուրբն աստուծոյ եւ վերին Երուսաղէմի ճշմարտապէս քաղաքացիին կամ հաւանեցաւ ընդ հարկանողսն, եւ կամ անտես առնել զայն ներեաց կամ փոքր ինչ շարին լուծումն իմանայր, այլ տեսանեմք իմն, եւ ի մեծ իմն սքանչելիք: Եւ զինչ այլ քան եթէ նորագոյն արժանաւոր յաւելուած եկեղեցոյն առնէր զխոտովութիւն եւ զթշուառութիւն իբրև զեղեցիկ իմն զնէր յուրից Էպիսկոպոսաց|| զգաւառն հոծելով, յորմէ զի<sup>ն</sup>նչ լինէր երեք զեղեցկագոյնք անձանց յուրից ինամակալութիւնք եւ զքաղաքն իւրաքանչիւր ումեք զիր ունել, եւ լուծանել զայն զպատերազմ: Այսորիկ մտածութեան երկեա մի գուցէ, եւ եւ եղէ վարկպարագի գործ, եւ ոչ զիտեմ եթէ որպէս պարտ իցէ ասել վայելչաբար: Արդ՝ զամենայն զառնն սքանչանալ է, բայց ոչ որքան կամ որպէս ասել կարողութիւն զմի զայն գովել ոչ ունիմ, քանզի խոստովանիմ զախտն եւ ոչ այլոց յուրից անգիտացեալ առ մեզ նորածեութիւն եւ անհաւատութիւն, զորոյ եւ ոչ ժամանակս արտմութիւն պատմեաց: Անդոսա ինչ ամենայն առ ի կեանսս անհարթութիւն եւ խառնակութիւն, եւ իմաստասիրելն ոչ կարել կամ ոչ զմտաւ ածել, թէպէտեւ դուզնարեալ քան զերկրորդ քանն: Սակայն եթէ որ զայն ընդունիցի զմեր զյաղագս առնն զպատասխանիսն առնել, զի մեծամեծս խորհէր քան զմարդկան իրս եւ նախքան աստի հրաժարել, փոփոխումն առնել, զամենայն առնէր զհոգոյն ի սիրելութեանէն պատկառել զիտէր, անդանար միայն անարդէր, ուրանար զաստուած: Պարտ եւ արժան էր նախապատիւ առնել եւ առաւել եւս ունել, քան զլուծումնն:

ԿԱ. Արդ երկնչիմ մի գուցէ ի պղերգութենէ բամբասանաց  
 փախշելով, որք զնորա զամենայն հայցեն, ընդ անյագութեան  
 գրով անկայց, այնոցիկ, որք զովնն զշափաւորն եւ որ օշ զայն  
 անարգիցին, ամենայն շափաւորն լաւ է՝ մանաւանդ ի զովու-  
 թեանցն իրս եւ որ յամենայնի զիր զվարան պահեաց: Բայց սա-  
 կայն զերկոսեանն արհամարհելով զյոյժ համառաւատն եւ զյա-  
 ւէտ անյագսն այսպիսի ինչ բանիւս վարեցայց, այլք զայլ ինչ  
 ուղղեն, որք զառաքինութեան ինչ տեսանեն: Բայց ամենայն եւ  
 ոչ յոչ շողաւ առ ի // ծայրագունիցն, այլ այնպիսին է մեզ քաշ, որ  
 զյուրվագոյնն հանդիպէ ուղղել եւ կամ զմի, որ առաւելագոյն  
 իցէ: Իսկ նա այնպէս յամենայն եհաս, որպէս լինել ինչ պատուա-  
 սիրութիւն բնութեանս եւ զիտեսցուք զանստացութեամբիւն: Ո՞  
 այնպէս զովեաց եւ զկեանս զանպաճոյնս, եւ զանաւելորդ եւ զինչ  
 էր նմա երբէք, բայց մարմնոյն եւ կարեւորաց մարմնոյն ծածկու-  
 թից փարթամութիւն ոչ ինչ ունելն եւ խաշն ընդ որում կեայր  
 միայն զորքան զյուրվ զինչս վարկանէր ինքեան պատուականա-  
 գոյն: Վասն զի զամենայն եւ ոչ եթէ ախորժեցել որ արդեաւ  
 կարողութիւն լինի ստանալ, իսկ զամենայն արհամարհել եւ այն-  
 պէս լաւագոյն, քան զամենայն երեւել: Այնպիսի իմն զմտաւ ածէր  
 եւ նոյնպիսի ունէր: Բագնի ոչ կարատացաւ եւ ո՛չ սնափառու-  
 թեան, ո՛չ բազմացն քարողութեան, ո՛չ զկրատեսայ ժուժկալութիւն,  
 Թերեացոցն ազատութիւն, այլ լինել՝ ոչ կարծիս տալ առաքինու-  
 թեան, ոչ ի կարաս քնակէր եւ ի մէջ հրապարակի, որպեսզի յա-  
 մենեցունց զովիցի սնոտի շահաւաճսութիւն՝ ի տարակուսանս  
 առնելով առանց պատուասիրելոյ: Աղքատ էր եւ առանց հերկելոյ  
 եւ զամենայն ինչ զարտաքս հանել ժուժայր, զորոց երբէք ունէր,  
 թեթեւագոյնս նաւէր ընդ կենցաղոյս ծով:

ԿԲ. Սքանչելի ժուժկալութեամբ եւ սակաւապիտութեամբ, եւ  
 ոչ ընդ իշխանութեամբ լեալ հեշտութեանցն ոչ իրրեւ ընդ դառն եւ  
 ընդ անազատ տիկնաւ, որովայնիւն անկեալ: Ո՞ այնպէս մանա-  
 ւանդ անկեւրակուր էր, ոչ բազում ինչ ասել եւ ան//մարմին, քան-  
 զի զոր կորակալութիւնս եւ զյագեցմունս յանբանագոյնսն ըն-  
 կեաց, եւ որոց ստրկական եւ ի վայր հային կեանքն: Բայց ինքն  
 ոչ ինչ զիտէր մեծ յետ սոսորդին ի համապատուոցն, այլ ընդ  
 կարեւորսն անցանէր միայն՝ որպէս կարողութիւն էր, եւ միայն  
 զիտէր փափկանալ զոչ փափկանալովն երեւեալ եւ ոչ ի նեոն այ-  
 նոցիկ կարատանալ յուրվից: Այլ առ շուշանս հայեալ եւ թոշունս, ո-



բոց անբաւ է զեղեցկութիւն եւ պատրաստ փափկութիւն ըստ մեծի խրատու իմոյ Քրիստոսին եւ մարմնով յազազս մեր աղքատացելոյ՝ զի մեք ճօխասցուք նորա աստուածութեամբն: Անզուտ նմա մին պարեզաւտ եւ բաճկոն, եւ զեռնախշտութիւն, եւ տրքնութիւն, եւ առանց բաղանեաց կեանք: Նորա պարկեշտութիւնք եւ հեշտալի ընթրիք՝ խորտիկ հաց եւ աղ, նորա խահագործութիւնքն եւ ըմպելի՝ ի զգաստացուցիչ եւ առատ, զոր մշակեն աղբիւրք ոչ ինչ աշխատելով, յորոց կամ հանգերձ որովք հիւանդատածութիւնք  
A800v եւ բժշկութիւնք, հասարակաց մեր մի իմաստասիրութիւն, || վասն զի պարտ եւ արժան էր ինձ ի վտանգաւորսն հաւասար ունել, ի յայլսն՝ նուազեցելուս:

